

ԿԱԶՄ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

Գործունեության ոլորտը

• **Սոցիալ-տնտեսական ներգրավման ուղղված դասընթացներ /ծրագրեր.** մասնագիտական վերապատրաստում (խոհարարության դասընթաց), անհատական մասնագիտական վերապատրաստում, համակարգչային դասընթացներ, ռուսերեն դասընթացներ, ինքնագրավածության հմտություններ:

• **Երիտասարդության ներգրավման ծրագրեր և միջոցառումներ.** «Բազմազանության միասնություն» ծրագիր (երիտասարդական միություն և միջմշակութային ճամբար), «Երիտասարդների ինտեգրում» (Երևան-Հայկ ակումբ, Երիտասարդական նախաձեռնություններ, Երիտասարդական ճամբար, Երիտասարդների ակումբ):

• **Սոցիալ-մշակութային ինտեգրման ծրագիր.** «Միացեք համայնքին» ծրագիր (հայոց լեզվի դասընթացներ և մշակութային հանդիպումներ Հատուկ կացարանի բնակիչների համար կամավորների աջակցությամբ):

• **Աջակցություն Գորիս քաղաքում Համայնքային Տեխնոլոգիական կենտրոնի շահագործմանը:**

Հասցե՝ Նալբանդյան փ. 29, ք. Երևան, Հայաստան
Հեռ. (010) 54-18-44, (077) 54-18-44, (055) 54-18-45
(Աշխատանքային օրերը՝ Երկուշաբթի-Շաբաթ)
Էլ. փոստ espaces@kasa.am, kasaam@kasa.am;
Վեբ-կայք՝ www.kasa.am/fr/;

FB էջ՝ KASA Swiss Humanitarian Foundation

Հայ օգնության ֆոնդի Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ (ՀՕՖ ԵԱԿՀ)

ՀՕՖ ԵԱԿՀ-ն ձգնաժամի միջամտության և վերականգնողական ծառայություններ է մատուցում 3-18 տարեկան այն երեխաներին, ովքեր ունեն.

1. **Ապաստանման կարիք.** Ծառայությունը կարճաժամկետ է և տրամադրում է 7/24 ռեժիմով խնամք և պաշտպանություն, ինչպես նաև.
 - Սոցիալ-մանկավարժական աջակցություն
 - Հոգեբանական աջակցություն
 - Մանկաբույժի աջակցություն
 - Իրավաբանական խորհրդատվություն
2. **Սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք.** Տրամադրվում է ինչպես Կենտրոնում ապաստանված երեխաներին, այնպես էլ Կենտրոնից դուրս գտնվող մտահոգության առարկա հանդիսացող երեխաներին: Այդ ծառայություններն են.
 - Անհատական և ընտանեկան խորհրդատվություն
 - Միջամտություն ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարմանը
 - Միջամտություն և աջակցություն համապատասխան ծառայություններին հասանելիությանը

- Հմտությունների զարգացում
- Աջակցություն իրավունքների իրացմանը մտահոգության առարկա հանդիսացող երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրման գործընթացում

3. **Դիմակայության և ճկունության զարգացման անհրաժեշտություն.** Ծառայությունը հասանելի է ինչպես Կենտրոնում ապաստանված, այնպես էլ Կենտրոնից դուրս գտնվող մտահոգության առարկա հանդիսացող երեխաներին: Այն անհատական և խմբային արտթերապիայի միջոցով զարգացնում է ստեղծագործական մտածելակերպը, խթանում ինքնարտահայտումը, նպաստում ինքնագնահատականի բարձրացմանը, ակտիվացնում ինքնապաշտպանական մեխանիզմները:

Հասցե՝ Կարապետ Ուլենցի փ. 64, ք. Երևան, Հայաստան

Հեռ. (060) 540 150, (095) 240 150

Թեժ գիծ՝ (0800) 61 111

Էլ. փոստ՝ farz@far.am;

Վեբ-կայք՝ www.farusa.org

ՄԱԿ ՓԳՀ-ի և իր գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

ՄԱԿ ՓԳՀ-ի կամ իր գործընկեր կազմակերպությունների դեմ բողոք ներկայացնել կարող եք ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր կազմակերպությունների գրասենյակներում՝ լրացնելով բողոքի ստանդարտ ձևը, կամ ուղարկելով նամակ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ՝ այն հասցեագրելով ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցչին, կամ ուղարկելով նամակ ՄԱԿ ՓԳՀ-ի գլխամաս՝ Գլխավոր տեսուչի գրասենյակ՝ այցելելով հետևյալ վեբ-կայքը՝ www.unhcr.org:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿ ՓԳՀ)

ՄԱԿ-ի գրասենյակ

Պետրոս Ադամյան փ. 14,

Երևան 0010, Հայաստան

Հեռ.՝ (010) 56 47 71, (010) 58 48 92

Էլ. փոստ՝ armyeptr@unhcr.org

Վեբ-կայք՝ <http://www.unhcr.org>

<http://www.un.am/am/UNHCR>



Տեղեկատվություն Հայաստանում

փախստականների, ապաստան
հայցողների և այլ տեղահանված
անձանց համար

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան
2019

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ) հիմնադրվել է 1950 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատն է առաջնորդել և համակարգել աշխարհում փախստականների պաշտպանությանը և նրանց խնդիրների լուծմանն ուղղված միջազգային ջանքերը: Փախստականների պաշտպանության հիմնական պատասխանատվությունը կրում են կառավարությունները: ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատն է նաև քաղաքացիություն չունեցող անձանց աջակցությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ի դերը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) հանդիսանում է 1951 թ. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ Կոնվենցիայի անդամ պետություն: ՀՀ կառավարությունը ստանձնել է ապաստանի դիմումները քննելու պատասխանատվություն: Հետևաբար, փախստականի կարգավիճակի դիմումները պետք է ներկայացվեն Միգրացիոն ծառայություն, որը որոշում է կայացնում՝ արդյոք հայցվորը ստանում է փախստականի կարգավիճակ Հայաստանում (հասցեն՝ ներքևում):

Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ն չի գրանցում փախստականներին և չի տրամադրում փախստականի փաստաթղթեր: Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի դերն է աջակցել պետական մարմիններին՝ ապահովելու ապաստանի տրամադրման որակյալ ընթացակարգեր, ինչպես նաև փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ պարտականությունների իրականացումը՝ միջազգային իրավունքին և նորմերին համապատասխան: ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է ապաստան հայցողներին՝ տրամադրելով սոցիալական և իրավական խորհրդատվություն և դատական ներկայացուցչություն՝ իր գործընկեր կազմակերպությունների միջոցով: Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն հաճախ դիտորդի կարգավիճակով մասնակցում է փախստականի կարգավիճակի տրամադրման հարցազրույցներին և պետական մարմիններին ներկայացնում է իր դիրքորոշումը որոշ երկրներից ապաստան հայցողների միջազգային պաշտպանության կարիքների և իրավական խնդիրների վերաբերյալ:

ՄԱԿ ՓԳՀ-ն լրացնում է կառավարության ջանքերը՝ բավարարելու ապաստան հայցողների, փախստականների և տեղահանված անձանց հիմնական կարիքները և աջակցում է լրացնելու պակասը առողջապահության, կրթության և եկամտաբերության խթանման ոլորտներում՝ իրականացնելով ծրագրեր իր գործընկեր կազմակերպությունների միջոցով:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև դասընթացներ է կազմակերպում պետական պաշտոնյաների, ՀԿ աշխատակիցների, ինչպես նաև փախստականների պաշտպանության հարցերում այլ կարևոր դերակատարների համար:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը քարտզում է ազգային իրավական դաշտի և քաղաքականության բարելավումը՝ տրամադրելով խորհրդատվություն և գրավոր առաջարկներ: Խնդրում ենք նկատի ունենալ, որ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի մանդատը չի ներառում ապաստանի դիմումների ընդունումը՝ այլ երկրներ ապաստան հայցելու համար: Այլ երկրներում ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել համապատասխան երկրների դեսպանություններ:

Հայաստանում ապաստանի հարցերով լիազոր մարմին

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայություն

Գործունեության շրջանակը

- Ապաստան հայցողների ընդունելություն
- Փախստականի կարգավիճակի որոշում
- Ինտեգրման աջակցություն
- Փախստականների ինտեգրման խթանում՝ գործընկեր կազմակերպությունների ծրագրերին ուղղորդման միջոցով

Հասցե՝ Կարապետ Ուլնեցի փ. 31, ք. Երևան, Հայաստան
Հեռ. (060) 27-50-25/26

Էլ. փոստ՝ externalrelations.sms@gmail.com

Վեբ-կայք՝ www.smsmta.am

ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնական գործընկերները 2019 թ.

Որոշ օգնության ծրագրեր կարող են սահմանափակ լինել: Խնդրում ենք ճշտել անմիջապես գործընկեր կազմակերպության հետ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

«Առաքելություն Հայաստան»-ի կենտրոնական գրասենյակում, փախստականների թիրախ տարածքներում, Հատուկ կացարանում և Մոցիալական տներում իրականացվող գործառնություններ.

- Մոցիալական ծառայություններ (խորհրդատվություն, դեպքի վարում, ուղղորդում)
- Իրավաբանական աջակցություն (խորհրդատվություն, իրավունքների պաշտպանություն և դատական ներկայացուցչություն)
- Առողջապահական ծառայություններ (տեղեկատվական աջակցություն, ուղղորդում, բուժում և դեղորայքի տրամադրում)
- Խնամքի ծառայություններ (հաշմանդամների/տարեցների համար)
- Բնակավարձի մասնակի աջակցություն
- Շահերի պաշտպանություն

- Մարդասիրական դրամական օգնություն
- Մարդասիրական օգնություն՝ հիմնական պարենային/ուշ պարենային ապրանքների տեսքով
- Ժամանակավոր կացարանի աջակցություն՝ սոցիալական տների միջոցով

Հասցե՝ Գարեգին Նժդեհ փ. 42, ք. Երևան, Հայաստան
Հեռ. (010) 44-47-92, (010) 44-47-61

Էլ. փոստ՝ org@ngo.mission.am

Վեբ-կայք՝ www.mission.am;

FB էջ՝ www.facebook.com/MissionArmenia

Հայկական կարմիր խաչի ընկերություն

Գործունեության ոլորտը

- Շաբաթական մոնիթորինգային այցեր Հատուկ կացարան
- Խմբային և անհատական տեղեկատվական հանդիպումներ/ ուղղորդումներ, տեղեկատվական նյութերի տպագրություն և տրամադրում
- Խորհրդատվություններ զբաղվածության վերաբերյալ և ուղղորդումներ
- Եկամտաբերության խթանման գործունեության ծրագիր՝ գործիքների տրամադրում, բիզնես կողմնորոշում, կրկնակի աջակցություն (հիմք ընդունելով նախորդ բիզնես գաղափարը)
- Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և առաջին օգնության վերաբերյալ դասընթացներ
- Մեռով և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ
- Անհատական աջակցություն սեռով և գենդերով պայմանավորված բռնություն վերապրածներին
- Անհատական հոգեբանական խորհրդատվություն
- Մոնիթորինգային այցեր սահմանային անցակետեր
- Թարգմանչական ծառայությունների տրամադրում Հասցե՝ Պարոնյան փ. 21/1, ք. Երևան, Հայաստան
Հեռ.՝ (060) 62-50-63

Էլ. փոստ՝ arcs-pm@redcross.am

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսմեն)

Պաշտպանը հանդես է գալիս որպես անկախ պետական պաշտոնատար անձ, ով հետևում է պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների բնագավառում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Պաշտպանը նպաստում է նաև անձանց, այդ թվում ապաստան հայցողների, փախստականների և Հայաստանում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Հասցե՝ Պուշկին փ. 56ա, ք. Երևան, Հայաստան

Հեռ.՝ (010) 53 76 51

Թեժ գիծ՝ 116

Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am

Վեբ-կայք՝ <http://www.ombuds.am/>

FB էջ՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/?fref=ts>